Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

1912 հունվար 5 Պրագայում բացվեց ՌՍԴԲԿ համառուսաստանյան 6-րդ կոնֆերանսը: Ս. Սպանդարյանը և Ստ. Շահումյանն ընտրվեցին Կենտկոմի կազմում:

հունվար 23 Երևանի նորակառույց ջրմուղի բացումը:

փետրվար 8 Մոսկվայում մահացավ հայագետ պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանը: (Ծնվ. 1853թ.-ին, Ալեքսանդրապոլում):

մարտ 13 Թիֆլիսում մահացավ հայ դասական դրամատուրգիայի հիմնադիր Գաբրիել Սունդուկյանը: (Ծնվ. 1825թ.-ին):

սեպտեմբեր 19 Հայ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներից Թիֆլիսում հրավիրված ժողովը դիմեց ռուսական կառավարությանը Հայկական հարցի նոր արծարծման համար:

հոկտեմբեր 2 Ամենայն Հայոց Գևորգ հինգերորդ կաթողիկոսի դիմումը Նիկոլայ երկրորդին:

հոկտեմբեր 9 Սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը, որին մասնակցեց Անդրանիկի գլխավորած հայկական ջոկատը: (Տևեց մինչև 1913 թ. մայիսի 30-ը):

նոյեմբեր 10 Կաթողիկոս Գևորգ V-ը ստեղծեց ազգային պատվիրակություն Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ Հայկական հարցը ռուս և եվրոպական դիվանագիտության առջև բարձրացնելու համար:

դեկտեմբեր 16 Հովհաննես Թումանյանի նախագահությամբ Թիֆլիսում կազմակերպվեց հայ գրողների Կովկասյան ընկերությունը:

դեկտեմբեր 20 Ցարական կառավարությունը օրենք հրապարակեց «Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Ելիսավետպոլի, Բաքվի նահանգների ժամանակավոր պարտավորյալ, կախյալ գյուղացիների՝ կալվածատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունները դադարեցնելու և պետության օժանդակությամբ հողաբաժինները պարտադիր կերպով ետ գնելու մասին»:

դեկտեմբեր 21 Կ. Պոլսում Հայոց Ազգային ժողովը որոշում ընդունեց Հայկական հարցը բարձրացնել Լոնդոնում հրավիրվելիք դեսպանների կոնֆերանսում:

1913 հունվար 29 Թուրքիայում իշխանության գլուխ կանգնեց Էնվեր, Թալեաթ և Ջեմալ փաշաների եռապետությունը:

մարտ 16 Ծնվեց բանաստեղծ, ակադեմիկոս, լեզվաբան Էդուարդ Աղայանը:

ապրիլ 3 Կ.Պոլսի պատրիարքարանը ռուսական դեսպան Գիրսին ներկայացրեց բարենորոգումների իր նախագիծը:

մայիս 4 Երևանում բացվեց հեռախոսային ցանցը:

մայիս 13 Կ. Պոլսի Ազգային ժողովի հատուկ հանձնաժողովը հուշագիր ներկայացրեց թուրքական կառավարությանը հայկական նահանգներում տիրող դրության վերաբերյալ:

մայիս 30 Ավարտվեց Բալկանյան առաջին պատերազմը, որին մասնակցեց Անդրանիկի գլխավորած հայկական ջոկատը:

հունիս 6 Ռուսական դեսպանատան առաջին թարգման և խորհրդական Ա. Մանդելշտամը մշակում է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների

հունիս 29 Բալկանյան երկրորդ պատերազմի սկիզբը (մինչև օգոստոսի 10-ը): Թուրքերը նվաճեցին և գրավեցին Հունական և Բուլղարական

հուլիս 3 Կ. Պոլսի Ենի-Քյոյ արվարձանում իր աշխատանքներն սկսեց «Հայկական բարենորոգումների հանձնաժողովը»:

հուլիս 3 Կ. Պոլսի դեսպանաժողովն սկսեց Հայկական բարենորոգումների հարցի քննարկումը:

դեկտեմբեր 14 Գերմանիան Թուրքիա ուղարկեց գեներալ Լիման Ֆոն Սանդերսի գլխավորած ռազմական պատվիրակությունը:

1914 հունվար 26 Կ. Պոլսում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց համաձայնագիր՝ Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու մասին, որը չիրականացավ:

մարտ 29 Թիֆլիսում հիմնվեց հայոց պատմական և հնագիտական ընկերությունը:

հուլիս 19 Սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը:

հուլիս 20 Կ. Պոլսում Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքվեց գաղտնի ռազմական դաշնագիրը:

օգոստոս 12 Նիկոլայ II-ի հրամանով պատերազմական դրություն հայտարարվեց Կովկասի բոլոր շրջաններում:

սեպտեմբեր 8 Հայտարարվեց հայ կամավորական խմբեր ստեղծելու մասին:

հոկտեմբեր 16 Գերմանական ծովակալ Սուշոնի գլխավորությամբ գերմանական նավատորմը ռմբակոծեց Ռուսաստանի Սևծովյան նավահանգիստները:

հոկտեմբեր 20 Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային:

1914 հոկտեմբեր 21 Ռուսական զորքերը գրավեցին Դիադինն ու Բայազետը:

հոկտեմբեր 28 Ավարտվեց Ալաշկերտի ամբողջ հովտի գրավումը ռուսական զորքերի կողմից:

նոյեմբեր 10 Թուրքական զորքերի պարտությունը Էրզրումի տակ:

դեկտեմբեր 1 Սարիղամիշի օպերացիան, Էնվեր փաշայի բանակի ջախջախումը:

(Շարունակելի)

Լուրեր

Իրանահայ համայնք

ԻՐԱՆԱՀԱՅԵՐԸ ՃԱՆԱՉԵԼԻ ԿԴԱՌՆԱՆ ՆԱԵՎ ԻՐԵՆՑ ՊԱՀՊԱՆԱԾ ԵՎ ՍՏԵՂԾԱԾ ՁԵՌԱԳՐԵՐՈՎ

Նոր Ջուղայի հայկական գաղթօջախի հիմնադրման 400-ամյակի կապակցությամբ Մատենադարանի ֆոնդերից հանված 49 ձեռագրեր՝ ավետարաններ, Աստվածաշնչի օրինակներ, ծիսական գրքեր, ճաշոցներ, պատարագամատույցներ, թարգմանություններ եւ այլն, ներկայացված են այնտեղ երեկվանից բացված ցուցահանդեսում: Ձեռագրերը հարուստ տեղեկություններ են հաղորդում եւ ամբողջական գաղափար տալիս բռնագաղթած հայերի, եւ հատկապես Նոր Ջուղայի հայ գաղութի պատմության եւ մշակութային կյանքի մասին: «Բռնագաղթի ճանապարհին մեծ զոհեր ու կորուստներ կրած հայերի նկատմամբ Շահ Աբբասը հետագայում բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերել: Նրանց հողեր է հատկացրել Նոր Ջուղան կառուցելու, արհեստներն ու առեւտուրը զարգացնելու համար: Այս գաղթօջախը յուրահատուկ է եղել նաեւ այն բանով, որ հայերը նպաստել են ոչ միայն առեւտրային կապերի զարգացմանը, այլեւ կարեւոր դեր խաղացել դիվանագիտության եւ մշակույթի ոլորտում», «Ազգի» հետ զրուցելիս ասաց Մատենադարանի ցուցասրահի վարիչ Ահդա Չարախչյանը:

Շահ Աբբասի բռնագաղթի ժամանակ հայերն իրենց հետ Իրան են տարել բազմաթիվ ձեռագրեր, հետագայում ստեղծել են նորերը, որոնք հիմնականում պահպանված են Մայր աթոռ Սբ. Էջմիածնի ձեռագրատանը, Մատենադարանում, Իրանի Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանում:

Ամերիկահայ մշակույթի հիմնադրամի «Փերիա» մշակութային կենտրոնը 2003 թվականի օգոստոսից սկսել է միջոցառումների ծրագիր, որի նպատակը շահաբբասյան բռնագաղթի հետեւանքով Իրանում ձեւավորված Նոր Ջուղայի գաղութի 400-ամյա պատմությունն ու մշակութային արժեքները աշխարհին ներկայացնելն է:

Իրանական աղբյուրների համաձայն, Իրան տեղափոխված առաջին հայերը եղել են ճարտարապետներ, նրանք մ.թ.ա. 6-րդ դարում բնակեցվել են ներկայիս Շիրազ քաղաքում՝ Դարեհ Ա-ի ժամանակ Աքեմենյան դինաստիայի մայրաքաղաքներ Շուշի եւ Պերսեպոլիսի պալատները կառուցելու նպատակով: Էսմայիլ Ռայինի «Իրանցի հայերը» գրքում կան նաեւ վկայություններ, որ այդ շրջանում Իրան տեղափոխված հայերը հիմնականում կայսրության բանակում ծառայող զինվորականներ են եղել: Հետագայում, ըստ հայ պատմիչների, հայերի թիվն ավելացել է առաջին բռնագաղթերի հետեւանքով, որ տեղի են ունեցել Սասանյան թագավորներ Արտաշիր Պապականի եւ Շապուհ Բ-ի օրոք: Ուշագրավ է, որ հայկական աղբյուրների համաձայն բռնագաղթել է 100 հազար մարդ, իսկ ըստ պարսկական աղբյուրների՝ 113 հազար հայ ընտանիք: 7-րդ դարի սկզբին, երբ արաբներից պարտություն կրած Իրանը մահմեդականություն է ընդունել, հարկադրված մահմեդական են դարձել նաեւ հայերը եւ ձուլվել իրանցիներին: Հետագա դարերին Իրանում կրկին բազմամարդ հայկական համայնք է ձեւավորվել: 1603 թվականին Վանի, Մանազկերտի, Ալաշկերտի, Էրզրումի, Բասենի, Խնուսի վրա հարձակված Շահ Աբբասը Իրան է տեղափոխել 60 հազար հայերի: Մեկ տարի անց ավելի մեծ թվով հայեր են բռնագաղթել Նախիջեւանից, Երեւանից եւ Արցախից, ողջ Արեւելյան Հայաստանից: Մոտ 27 հազար ընտանիքների Շահ Աբբասը տեղափոխել է Գիլան եւ Մազանդարան նահանգներ, սակայն նրանց մեծ մասը չի դիմացել կլիմայի կտրուկ փոփոխությանը եւ մահացել է: Տարբեր տվյալներով, բռնագաղթածների թիվը 500 հազարից ավելի է եղել: Ինչպես արդեն նշեցինք, Շահ Աբբասը համակրանքով է վերաբերվել բռնագաղթած հայերին, սակայն նրա հաջորդները կտրուկ փոխել են իրենց վերաբերմունքը հայերի նկատմամբ, ճնշել եւ հարստահարել նրանց, երբեմն բռնի ուժով մահմեդականացրել: 1736 թվականից ի վեր հայերի վիճակը բարելավվել է, նրանք զբաղեցրել են պետական եւ զինվորական բարձր պաշտոններ, կարեւոր դերակատարում ունեցել երկրի զարգացման համար:

«Մինչեւ 2010 թվականը տարբեր երկրներում կներկայացնենք Նոր Ջուղայի հայկական գաղութի 400-ամյա պատմությունն ու մշակույթը: Ցավոք,

դրա մասին թե՛ Հայաստանում, թե՛ այլ երկրներում քչերն են տեղյակ, մինչդեռ հենց այդ մասունքների շնորհիվ է իրանահայությունը պահպանել եւ շարունակում է պահպանել իր ազգային դիմագիծը», ասաց «Փերիա» մշակութային կենտրոնի նախագահ Մասիս Բաղդասարյանը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Իրան

ԹԵՀՐԱՆՆ ՈՒ ԿԻԵՎԸ

Հայաստանին առաջարկում են մասնակցել Իրանից Ուկրաինա գազի արտահանման նախագծին

Հուլիսի 25-ին Թեհրանում Իրանի եւ Ուկրաինայի ներկայացուցիչները ստորագրել են հուշագիր, որում առաջարկում են Հայաստանին մասնակցել Իրանից Ուկրաինա գազատարի ուսումնասիրության, նախագծման եւ շինարարության հարցերով ինգակողմ հանձնաժողովի աշխատանքին: Ըստ «Մեդիամաքսի», Իրանի նավթի փոխնախարար Մոհամմադ Նադի Նեջադ-Հոսենյանը հայտարարել է, որ Ուկրաինան շահագրգռված է իր ներքին կարիքների համար տարեկան 20-30 մլրդ խմ գազի ներմուծման հարցում: «Երկու կողմերն առաջարկել են Հայաստանին, Վրաստանին եւ Ռուսաստանին ծեւավորել հնգակողմ հանձնաժողով՝ Իրանից Ուկրաինա գազատարի նախագծման ու շինարարության հարցերի ուսումնասիրության համար», ասել է նա:

«Ազատությունն» իր հերթին հավելում է, որ թեհրանյան բանակցություններում Կիեւն առաջարկել է դեպի Եվրոպա իրանական գազի արտահանման երկու տարբերակ, որոնք երկուսն էլ անցնում են Հայաստանով՝ Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան-Ուկրաինա-Եվրոպա եւ Իրան-Հայաստան-Վրաստան-Սեւ ծով-Ուկրաինա-Եվրոպա: Ուկրաինայի էներգետիկայի փոխնախարար Ալեքսեյ Իվչենկոն ասել է, որ փորձագետների մակարդակով մշակվել են իրանական գազի արտահանման մի քանի տարբերակներ՝ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի եւ Սեւ ծովի տարածքով: «1,5 ամսվա ընթացքում փորձագետները պետք է հաշվարկեն ծախսերը եւ այդ նախագծերից ընտրեն ամենաընդունելի տարբերակը», ասել է նա:

Արցախ

Արկադի Ղուկասյան. «Ոչ ոքի չի հաջողվի մեզանից խլել Արցախի անկախությունը»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության օրվա առթիվ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը դիմում է հղել ժողովրդին: Ուղերձում, որ «Նոյյան տապան»-ին են տրամադրել ԼՂՀ նախագահին առընթեր տեղեկատվության գլխավոր վարչությունից, ասված է.

«Թանկագի՛ն հայրենակիցներ

Այսօր՝ սեպտեմբերի 2-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը տոնում է իր ծննդյան օրը՝ ԼՂՀ կազմավորման 14-րդ տարեդարձը:

Մենք մեր գլխավոր տոնը նշում ենք պահպանվող հրադադարի պայմաններում, ինչը մեզ թույլ է տալիս համեմատաբար հանգիստ իրավիճակում շարունակել շենացնել ժողովրդի կամոք զարգացման ժողովրդավարական ուղի ընտրած ազատ եւ անկախ Արցախը:

Ու թեպետ ԼՂՀ-ն դեռեւս միջազգային ճանաչում չի ստացել, սակայն մեր պետությունն ապացուցել է աշխարհին, որ ոչ միայն դե-ֆակտո կայացել է, այլեւ եվրոպական հանրության ստանդարտներին համապատասխանության մակարդակով առաջ է անցել իր շատ հարեւաններից: Դրա վկայությունն են ԼՂՀ Ազգային ժողովի ս.թ. հունիսին տեղի ունեցած հերթական ընտրությունները, որոնք

արժանացել են անկախ միջազգային դիտորդների բարձր գնահատականին:

Ոչ ոք արցախցիներին ժողովրդավարության դասեր չի տվել, ինչպես դա ամեն օր եւ ամեն ժամ տեղի է ունենում Ադրբեջանի առնչությամբ, մի երկրի, որտեղ առ այսօր ոչ մի ընտրություն` լինի դա նախագահական, խորհրդարանական, թե տեղական ինքնակառավարման մարմինների, չի համապատասխանել ժամանակակից ժողովրդավարական հասարակության տարրական նորմերին:

Այսօր Ադրբեջանն ի վիճակի չէ պաշտպանել նույնիսկ սեփական ժողովրդի, ուր մնաց թե այդ երկրում ապրող ազգային փոքրամասնությունների իրավունքները: Միայն այդ փաստն արդեն իսկ բավական է, որպեսզի աշխարհի առաջադեմ հանրությունը ճանաչի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի` սեփական, Ադրբեջանից անկախ ինքնիշխան պետություն ունենալու իրավունքը:

Այսպիսիք են այսօրվա իրողությունները, որոնց հետ աշխարհում, այդ թվում` Ադրբեջանում իսկ ստիպված են հաշվի նստել: Եւ ամենեւին էլ պատահական չէ, որ Բաքվի իշխանություններն ամեն կերպ փորձում են ադրբեջանական ժողովրդից թաքցնել Լեռնային Ղարաբաղի հաջողություններն իրավական, ժողովրդավարական պետության կառուցման գործում` իրենց քաղաքացիներին թույլ չտալով այցելել ԼՂՀ, հաղորդակցվել ղարաբաղցիների հետ:

Սակայն նման պահվածքն անհեռանկար է, քանզի այն էլ ավելի է օտարացնում երկու ժողովուրդներին, այդպիսով հեռացնելով հակամարտության համապարփակ եւ փոխընդունելի կարգավորման օրը:

Առավել եւս, Ադրբեջանի ղեկավարության նման գործողությունները, ինչպեսեւ այն, որ նա համառորեն չի կամենում բանակցություններ վարել ղարաբաղյան կողմի հետ, լուրջ կասկածի տակ են առնում քաղաքակիրթ միջոցներով եւ խելամիտ փոխզիջումների հիման վրա Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը լուծելու հեռանկարը:

Ահա թե ինչու հակամարտության կարգավորված չլինելու վիճակն առաջվա պես մնում է իբրեւ մի գործոն, որը տարածաշրջանում իրադրությունը նորից ապակայունացնելու վտանգ է ներկայացնում իրենից:
Օգտվելով առիթից` վերստին հավաստիացնում եմ ձեզ, որ ԼՂՀ ղեկավարությունը հակված է բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորել Ադրբեջանի հետ հակամարտությունը:

Դրա հետ մեկտեղ, մեր ժողովուրդը կարող է վստահ լինել, որ ոչ ոքի չի հաջողվի մեզանից խլել Արցախի` անդառնալի կորուստների գնով նվաճված անկախությունը: ԼՂՀ հիրավի համաժողովրդական Պաշտպանության բանակն ի զորու է արժանի հակահարված տալ բոլոր նրանց, ովքեր կփորձեն ոտնձգություն կատարել մեր հայրենիքի նկատմամբ: Դրա համար նա ունի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու հնարավորությունները:

Սակայն մենք իրավունք չունենք հանգստանալ ձեռք բերածով: Մեր անցած ճանապարհի սոսկ հերոսականացմամբ, առանց վաղվա օրվա հստակ, ստույգ նախանշումների մենք կարող ենք կորցնել ձեռք բերվածը, ինչը մեզ չենների սերունդները:

Մենք պետք է առաջիկայում եւս ամրապնդենք երկրի պաշտպանունակությունը, արագացնենք նրա տնտեսության, սոցիալական եւ մշակութային ոլորտների զարգացման տեմպերը: Անհրաժեշտ է լրիվությամբ աշխատեցնել մեր հիմնական հարստությունը` ղարաբաղցիների մտավոր եւ հոգեւոր ներուժը, նրանց աշխատասիրությունն ու պրոֆեսիոնալիզմը, բազմապատկել Արցախի մշակութային ժառանգությունը:

Այդ խնդիրների հաջող իրականացումն անիմաստ է առանց ԼՂՀ հասարակական-քաղաքական կյանքի հետագա ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության կառուցման: Մեր քաղաքացիների իրավունքների պահպանումը, օրենքի գերակայությունը պետք է պետության գործունեության հիմնարար սկզբունքները լինեն: Դա այլընտրանք չունի եւ չի էլ կարող ունենալ:

Ղարաբաղի պետականության կայացումը հնարավոր չէր լինի առանց Հայաստանի ու Սփյուռքի ակտիվ աջակցության եւ օգնության: Սակայն մենք դեռեւս լիովին չենք օգտագործում Հայաստան-Արցախ-Սփյուռք եռանկյունու քաղաքական եւ տնտեսական ներուժը, այդ թվում` ԼՂՀ միջազգային ճանաչման հարցում: Վստահ եմ` այդ ուղղությամբ մենք անելիքներ ունենք:

Թանկագի՛ն հայրենակիցներ, այս տոնական օրը մեզանից յուրաքանչյուրը պետք է համակվի Արցախի ապագայի համար պատասխանատվությամբ: Իհարկե, մենք դեռ չլուծված շատ հիմնախնդիրներ ունենք: Սակայն մենք կարող ենք բոլոր դժվարությունները հաղթահարել միայն համատեղ ջանքերով, ազնիվ աշխատանքով, փոխվստահությամբ եւ ուշադիր վերաբերմունքով յուրաքանչյուր արցախցու հոգսերի ու կարիքների նկատմամբ:

Շնորհավոր ձեր տոնը, թանկագի՛ն բարեկամներ: Ամենայն բարիք ձեզ: Խաղաղություն ու բարգավաճում մեր հայրենիքին` Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը»:

Հայաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝ 75 ՄԼՆ, ՎՐԱՍՏԱՆԻՆ՝ 70,5, ԱԴՐԲԵՋԱՆԻՆ՝ 38, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ՝ 3

Մ. Նահանգների Սենատը հաստատել է 2006 թ. ֆինանսական տարվա համար ԱՄՆ օժանդակության ծավալները նախկին խորհրդային հանրապետությունների համար: Ամերիկայի հայկական համագումարի հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Հայաստանին տրամադրվելիք գումարը կլինի 75 մլն, եւս 5,7 մլն դոլար նախատեսված է ռազմական օժանդակության շրջանակներում: Անդրկովկասյան հանրապետություններից Վրաստանը կստանա 70,5, Ադրբեջանը՝ 38 մլն դոլար: Լեռնային Ղարաբաղի համար 2006 թ. մարդասիրական օգնությունը կկազմի 3 մլն: Հիշեցնենք, որ Հայաստանից բացի միակ երկիրը Մ. Նահանգներն է, որը չճանաչված Լեռնային Ղարաբաղին տրամադրում է մարդասիրական օգնություն:

ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԸ ՉԷ՞ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ

Հովհաննես Իսակովի ծննդյան 111-ամյակի առթիվ

Բարդ ու դժվարին է եղել աշխարհահռչակ ծովակալ Հովհաննես Իսակովի անցած ուղին: Շատ անվանի պետական գործիչներ, զինվորական պաշտոնյաներ, գրողներ ու պատմաբաններ տասնյակ գրքեր, ակնարկներ, հոդվածներ են հրատարակել մեծատաղանդ Հ. Ս. Իսակովի մասին: Նա ունի հարուստ ու լայն կյանքի դյուցազնապատում՝ Իսակով նավատորմավար-ծովակալ, Իսակով պետական գործիչ, Իսակով գրող:

Հետաքրքրական է, որ բազում դրվատական, մեծարանքներով լեցուն հոդվածների, գրքերի շարքում նկատվում են անճշտություններ, հակասական տարրեր այդ մեծ մարդու կենսագրականի, ծննդավայրի վերաբերյալ: Որտեղի՞ց եւ ե՞րբ է սկսվել այդ մտացածին, իրականությանը չհամապատասխանող տվյալների առկայությունը մամուլում, գրքերի էջերում՝ անհայտ է:

Ենթադրում ենք՝ ինչ-որ մեկի վրիպակը պարբերաբար փոխանցվել է մյուսներին՝ խեղաթյուրելով պատմության իրական փաստերն այն աստիճանի, որ նույնիսկ ՀՀ ամենակարեւոր տեղեկատու-հանրագիտարաններում (ՀՍՀ: Հ.4-1978- էջ 389 եւ «Ով է, ով է», Հ.2, 1985- էջ 138) Իսակովի ծննդավայրը համարում են Արեւմտյան Հայաստանի Կարսի շրջանի Հաջիքենդ գյուղը, որոշ աղբյուրներն էլ՝ Թբիլիսին: Սրանք քննադատությանը չեն դիմանում՝ ելնելով հետեւյալ աղբյուրներում նշված փաստերից.

1947 թվականի Հ. Ս. Իսակովի գրած ինքնակենսագրականից (Երեկոյան Երեւան, 1974, 22 օգոստոսի): Արմո Եղիշի Մալխասյանի «Սովետական բանակի հայ գործիչները» գրքից (Եր., 1963, էջ 194): Ռ. Աբելյանի «Մեծանուն ծովակալը» հոդվածից («Լրաբեր», Լոս Անջելես, 1984, 6 հոկտեմբերի): Աշոտ Ղազարյանի «Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր» (թարգմ. Վ. Վարդանյան) գրքից (Եր., 1981, էջ 5): Լ. Ստեփանյանի «Ծովակալը, գիտնականը, գրողը» հոդվածից (ՀՀ, 1994, 20 օգոստոսի): Գետաշենում ավելի քան մեկուկես դար առաջ կառուցված կիսաքանդ ջրաղացի գոյության փաստից, որը գետաշենցիները անվանել են «Տեր Իսականց ջրաղաց» կամ «Եգոր պապի ճաղացը» (տե՛ս Մալխասյանի «Սովետական բանակի հայ գործիչները» գիրքը (էջ 194) եւ գծագիրը (Բ. Սիսյանի արխիվում):

Վերոնշյալ աղբյուրները ստույգ վկայում են, որ Իսակովի հայրը, պապը եղել են բնիկ գետաշենցի, այլ ոչ թե սերել են Արեւմտյան Հայաստանի Կարսի գավառի Հաջիքենդ կոչվող գյուղից: Որ Իսակովը ծնվել է Գետաշենի ենթաշրջանի Հաջիքենդ ամառանոց-գյուղում, տարվա ամենաշոգ ժամանակ՝ օգոստոսի 22-ին*, հաստատում է անձնական արխիվի ուսումնասիրության հիման վրա գրված «Մարշալ Բաղրամյան» հիմնադրամի փոխնախագահ Լ. Ստեփանյանի գրած ծավալուն հոդվածն Իսակովի ծննդավայրի մասին. «Ծովերից եւ օվկիանոսներից հեռու գտնվող հայկական

Հաջիքենդ գյուղում», ապա «նաափսոսում էր, որ ծանր հիվանդությունը թույլ չի տվել ավելի վաղ իրականացնել իր այցելությունը: Նա մտադիր էր այցելել Հայաստան, լինել հարազատ Արցախում» (ՅՅ, 1994, 22 օգոստոսի): 1930 թ.-ից ադրբեջանական կառավարության որոշմամբ, հեռահար քաղաքականության իրագործման նպատակով Գետաշենը Հյուսիսային Արցախի հայաբնակ Շահումյանի շրջանի ենթակայությունից հանում, տալիս են խառը բնակչությամբ Խանլարի շրջանին:

1947 թ. ինքնակենսագրականում («Երեկոյան Երեւան», 1974, 22 օգոստոսի) գրված է. «Հայրս՝ Ստեփան Եգորի Տեր-Իսակովը, ծագումով հայ գյուղացու ընտանիքից էր: Նրա հայրը ջրաղացպան էր»: Եգոր պապը ցարական բանակում «ծառայել է գեներալ Տեր-Ղուկասովի զորամասում, աչքի ընկնող ծառայություններ մատուցել Բայազետի եւ Իգդիրի գրավման ժամանակ, եղել է խիզախ հետախույզ եւ անփոխարինելի կապավոր» («Լրաբեր», Լոս Անջելես): Եգոր Տեր-Իսահակյանը զորացրվելուց հետո վերադառնում է Գետաշեն, զբաղվում տնտեսությամբ, շինարարությամբ, Կուրակ գետի ձախ ափին կառուցում հայտնի ջրաղացը: Գետաշենցիները մամռոտ քարափի այդ ջրաղացն անվանում են «Տեր Իսականց ջրաղաց» կամ «Եգոր պապի ջրաղացը» (տե՛ս Մալխասյանի գիրքը, էջ 194):

Եգոր Տեր-Իսահակյանի որդի Ստեփանը՝ Իսակովի հայրը, նույնպես գետաշենցի զավակ, կամավոր զինվորագրվում է ցարական բանակ, աչքի ընկնում որպես թուրքերեն իմացող եւ կատարում թարգմանչի գործ: Հետագայում որպես զինվորական պաշտոնյա մասնակցում է 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմին, անձնուրացության եւ քաջության հրաշքներ գործում Կարս քաղաքը թուրքերից ազատագրելիս, պատերազմի վերջում ստանում Ստանիսլավի եւ Աննայի շքանշաններ: Պատերազմից հետո Ստեփան Տեր-Իսահակյանը վերադառնում է հայրենիք: Գանձակում երկար տարիներ աշխատում է որպես ճանապարհաշինարարության տեխնիկ: Այդտեղ նա ծանոթանում է կրթված օրիորդի՝ շվեդուհի Իդա Անտոնովնա Լաուերի հետ, ունենում դուստր Մարիամ, որդի Պողոս: «Իսկ 1984 թ. Ադրբեջանի Խանլարի շրջանի Գետաշենի ենթաշրջանի Հաջիքենդ գյուղ-ամառանոցում ծնվում է երրորդ զավակը՝ ապագա ծովակալ Հովհաննես Իսակովը»: Ստեփանն այդ տարիներին Բաքվի նավթահանքերի կապալառության գործով է զբաղվում, կարճ ժամանակ անց սնանկանում է եւ 1906 թ. մահանում սրտի արատից՝ ընտանիքի հոգսը թողնելով տիկնոջ եւ նրա հինգ տարեկան եղբոր՝ թիֆլիսաբնակ Պ. Ա. Լաուերի ուսերին: Վերջինս օգնում է քրոջ ընտանիքին տեղափոխվել Թիֆլիս՝ երեխաներին տալով կրթության: Երբ 1913 թ. Թիֆլիսում հարկ եղավ ձեւակերպել զինվորական գրանցումը, Հովհաննես Իսակովը չկարողացավ նույնիսկ ծննդյան վկայական ներկայացնել: «Իսակովների ընտանիքն արդեն տասը տարուց ավելի ապրում էր Թիֆլիսում, ուստի տեղի ոստիկանական գրասենյակը որպես պատանու ծննդավայր նշեց նրա գրանցման վայրը: Այդ պահից ի վեր, ըստ փաստաթղթերի մեծ մասի, նա ծնվել է Թիֆլիսում» (Ա. Ղազարյան, «Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր», Գ. 2, Եր.: 1981, էջ 5):

Համարյա նույնանման մեկնաբանության ենք հանդիպում Ա. Ե. Մալխասյանի «Սովետահայ բանակի հայ գործիչները» գրքի 245-րդ էջում. «...1901 թ. ընտանիքը տեղափոխվում է Բաքու, որտեղ Ստեփան Տեր-Իսահակյանը նավթահանքերում մի քանի տարի աշխատելուց հետո, 1906 թ. մահանում է սրտի կաթվածից, իսկ ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս... Ընտանիքի թափառումների ժամանակ կորչում է Հովհաննեսի ծննդականը: Ութ տարեկան Հովհաննեսի համար նոր ծննդական ու փաստաթղթեր ստանալու ժամանակ Թիֆլիսի ոստիկանատունը նրա անունն ու ազգանունը փոխում է՝ դարձնելով Իվան Իսակով»:

Կարծում ենք, որ վերոնշյալ հարուստ փաստերը լրիվ հաստատում են ծովակալ Իսակովի ծննդյան վայրը, թե ովքեր են նրա նախնիները, այն է՝ Գետաշենը եւ գետաշենցի պապերը:

**Ժամանակակիցների վկայությամբ, Իսակովի հետ Ստեփանը Գետաշենի ենթաշրջանի Հաջիքենդ գյուղում ունեցել է սեփական տուն-ամառանոց, որը պետականացվելուց հետո այնտեղ վարձով բնակվել են գետաշենցի տարբեր ընտանիքներ:*

Ռ. Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, ՀՀ ազատամարտի վետերանների միության անդամ

Մշակութային

Վահան Գևորգյան

Թշնամին մեր հին՝ բնավ չի փոխվում,
Տագնապը սրտում խելագար խնդում,
Երկնքին նայող վանքերն է քանդում,
Հողի մեջ թաղում խաչքար ու քարեր:

Գիշերն իջնում է անգութ ու մթին
Ավեր երկրի որբ տարածքներում՝
Աստղերն օտար՝ վարձու զինվորներ,
Խոժոռ նայում են դավին անտարբեր:

Արձագանքում է կոհինչը բուի,
Կսկիծն է սողում, գիշերը՝ սև օձ,
Հողն է ամլանում շնչից վիշապի:

Այնքան անխինդ են, արցունքի, ցավի
Երգերը մեր հին՝ մահ ու ավերի,
Երգերը տխուր իմ հայրենիքի:

***

Երգերը տխուր իմ հայրենիքի.
Մորմոք ու ճիչ են բնավեր հավքի,
Ամենուր փարված մեր բաց շուրթերին
Թներ են տենչում ճամփեքից դարձի:

Մեզ տուն են կանչում՝ նման են լացի,
Երգերն հայրենի տարագիր-պանդուխտ
Հնչում են արդեն շուրջ հազար տարի
Շուրջ հազար տարի որբ ենք ու մոլոր:

Ինչ որ մեզ տվեց թշնամին մի օր,
Գիտենք, որ նու՛յնը ճակատագիրը,
Նրան էլ կըտա անշուշտ լիաբուռ:

Ո՛չ, գութ չենք հայցում, կամ՝ կարեկցումի
Դրոշը պարզում, պարզապես հիմա
Հավատով ապրում ու մերն ենք զատում:

***

Հավատով ապրում ու մերն ենք զատում,
Հավատը հավետ մանուկ է մի խենթ,
Որ չի հասկանում թե ինչ է կասկած
Կամ որտեղից է սողոսկում նա ներս:

Եվ կասկածների կծիկը օձե
Անտարբեր, անհոգ, մանուկն իր ձեռքով
Խեղդում է ազատ, խնդում լիաթոք՝
Մեր դեմքին փարված սարսափի վրա:

Մենք հաշվենկատ ամոթից շիկնում
Երկինք ենք հայում շանթեր արարող
Անծիր Կապույտում տեղ ենք փնտրում:

Հողը կորցրած, երկնքում լազուր
Թևավոր հոգին ճախրում է ճչում
Նման ենք հավքին օտար ծովերում:

***

Նման ենք հավքին օտար ծովերում,
Մեզ մխիթարում, որ չունենք դադար:
Ծանր մարմինը հոգով է ճախրում:
Մահ է, կործանում, անդորր է թվում:

Մտքի մեղսավոր լաբիրինթներում
Հին աշխարհի կերտած հզոր հայերից
Տիգրանի փառքն ենք մերը համարում
Ու թագակիր ենք ամենքս մտքում:

Աշխարհին է լեցուն թագերով անթիվ,
Մերը միակն է հար ու հավիտյան
Մեր թագը բախտի լեռը Արարատ:

Ակնթարթի պես դարերն են չվում,
Ամեն ինչ փոխվում կորչում է անհետք
Աշխարհին ունայն է, մենք հանգիստ չունենք:

***

Աշխարհին ունայն է, մենք հանգիստ չունենք
Պատերազմներից ձեռնունայն դարձանք,
Թշնամու թողած ավարը, բաժին զինվորի
Անսալով խղճին ետ դարձրեցինք:

Հաղթող բանակի զինվորը հպարտ
Մուրացիկի պես իր զենքը փոխեց,
Թուրը հաղթության՝ խաչի ձև առավ
Խճճվեց կորավ խաչ-ա-թուր խաղում:

խաչ-ա-թուր խաղից խաչը մեզ մնաց
Թուրը միշտ կարող՝ դարձավ սաստող խաչ
Մենք մոլոր-շվար խաչին փարվեցինք:

Տե՛ր կերակրիր, մեր կարեկցանքը
Լեռներ է շարժում, մեր օրը արթուն,

Արդար վաստակի կարոտն է հսկում:

***

Արդար վաստակի կարոտն է հսկում,
Մեր քաղցած հոգին խաչին էր ձուլվել
Իսկ մեր թշնամին խնդում էր թաքուն
Նա մեզ խաճոող Աստծուն էր գովում:

Խաչ-ա-թուր խաղից հոգնած ու շվար
Վանք ու խաչքարով աշխարհն ենք ծածկել
Ձենք ու զրահը՝ խաչ ու բուրվառով
Փոխել ենք կորցրել քահանա դարձել:

Զինվոր-քահանա դե արի հիմա
Տե՛ր կարող, հզոր խաչերդ փրկիր
Մենք շաղ ենք տվել աշխարհում ունայն:

Քեզ նվիրել ենք ոչ միայն տաճար
Մենք քեզ ենք թողել երկիրը ավեր,
Մերը կորցրել, փեշիդ ենք փարվել:

***

Մերը կորցրել, փեշիդ ենք փարվել
Ինքդ էլ հաստատ մեր աղոթքներից
Զզվել ես, հոգնել, քեզ ենք մոտենում
Դու խուսափում ես հորիզոնի պես:

Գալիս ենք դարեր՝ պապ ու թոռներով
Ազգ ու բարեկամ երամ առ երամ
Ինքդ մեր երթից, մեր լաց ու կոծից
Շշմած ու մոլոր փախչում ես մեզնից:

Որտեղ որ մենք կանք, դու չկաս այդտեղ,
Հետին մուրացիկ աղերսողի պես
Խաչատուր դարձած քեզ ենք մոտենում:

Մեր երակներում մեր հազարամյա
Երազն է սառչում ու վանք ենք սարքում
Ներկա է վկան՝ լեռը Արարատ:

***

Ներկա է վկան՝ լեռը Արարատ:
Մեռնում-հառնում ենք ու կանք աշխարհում
Պարտական հավետ լեռանը միայն
Ինքնամաքրումի առասպելն է հին:

Վահագնից սերված Միերը մի օր
Լեռան մեջ մտավ միամիտ հայեր,
Արդարությունը կորավ աշխարհում
Խաչ-ա-թուր խաղից խաբնված հայեր:

Պարտված զորքի զինվորներ արի
Դարձել էք հավքեր և ո՞ւր էք թռում
Աշխարհը ունայն՝ փառքը՝ վաղանցուկ:

Ինչքա՜ն խիզախներ մնացին անհայտ,
Խաչով խաչվեցին՝ զինվոր, զորապետ...
Փառքը աշխարհում թրով են կերտում:

***

Օրը լեցուն է աշնան գույներով
Անցան գնացին հույզերը բոլոր
Կյանքն էլ վազող ալիք է թվում
Աշխարհը տեսանք մտքի թևերով:

Կիրքը հարատև մեր սիրտն է լափում
Բազե-արծիվ ենք օտար երկնքում,
Թշնամին մեր հին, բնավ չի՜ փոխվում
Երգերն են տխուր իմ հայրենիքի:

Հավատով ապրում ու մերն ենք զատում,
Նման ենք հավքի օտար ծովերում,
Աշխարհում ունայն՝ մենք հանգիստ չունենք:

Արդար վաստակի կարոտն է հսկում
Հինը կորցրել փեշիդ ենք փարվել
Ներկա է վկան լեռը Արարատ:

***

Ես ամենուրեք քեզ փնտրեցի,
Մեծ քազաքների բանուկ մայթերին,
Տաք ժխորի մեջ սրճարանների,
Ամենուր եղա, բայց քեզ չըգտա...

Ինչպես դու կայիր իմ երազներում
Ես քեզ այդպիսին չգտա բնավ:
Ինքս քո մասին պատմում եմ անվերջ,
Ուրիշ ես անգի՜ն դու իմ մտքի մեջ:

Ինձ սիրողներին ժպիտ նվիրում,
Կասկածիս վրա լիաթոք խնդում,
Ոչինչ չես ասում քո սիրո մասին:

Մտերիմներիս դու չես անտեսում,
Սրտիս խորքերում ապրում ես ու կաս,
Մտքերս վաղուց քո շուրջն են դառնում: